ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 145-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 36.2 հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի ««Պետական նպաստների մասին» օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 7 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածով հավաքագրվող տվյալները կիրառվում են ընտանիքների անապահովության գնահատման համակարգում Որոշման N 2 հավելվածով սահմանված դեպքերում և կարգով, իսկ Որոշման N 2 հավելվածով չնախատեսված տվյալների փոխանակման գործընթացը կիրառվում է անապահովության գնահատման նոր համակարգի իրականացման փորձնական ծրագրի շրջանակում՝ սկսած սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչեւ 2023թ. հոկտեմբերի 1-ը՝ անապահովության գնահատման նոր համակարգի սահուն ներդրում ապահովելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ կառավարության 2023թ

-ի N որոշման

ՀՀ կառավա
հունվար

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՆԿԻ, ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎՈՂ

NN ը/կ	**Ն ա խարարության, այլ պետական մարմնի, կազմակերպության անվանումը**	**Բովանդակությունը**	**Անհրաժեշտ տվյալները**	**Պարբերա-կանությունը**
1	2	3	4	5
1.	ՀՀ ներքին գործերի նախարարության 1) ոստիկանություն	1) հետախուզման մեջ գտնվելու տվյալը, անհայտ բացակայող լինելու տվյալը	1) Նույնականացված անձի հետախուզման մեջ գտնվելու, անհայտ բացակայող ճանաչված լինելու հանգամանքը, ներառյալ՝ սկիզբը՝ օր, ամիս, տարի 2) Ներքին գործերի նախարարության և ենթակա մարմիններում աշխատող և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու դիմում ներկայացրած անձանց	յուրաքանչյուր ամ

		աշխատավարձի չափը	
2) ճանապարհային ոստիկանություն	2)Անձնական օգտագործման փոխադրամիջոցներ	1) Նույնականացված անձի նախորդ տարում տեխնիկական զննում անցած փոխադրամիջոցի առկայությունը, փոխադրամիջոցի տեսակը, մակնիշը, արտադրման տարեթիվը, հաշվառման համարանիշը, նույնականացման համարը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 713-Ն որոշման համաձայն, վաճառքի գործարք իրականացնելու հանգամանքը,	առցանց հարցման համաձայն
		2) Նույնականացված անձին սեփականության եւ վարելու իրավունքնով պատկանող փոխադրամիջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը, նույնականացման համարը	
3) Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն	Բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց մասին տվյալներ	Նույնականացված անձի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշի	առցանց հարցման համաձայն

			բացակայության մասին տեղեկանքի համար, անձը հաստատող փաս տաթղթի տեսակը, համարը, սերիան, անձի անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր/ամիս/տարի, նձի սեռը, հաշվառման հասցեն	
2.	ՀՀ տարածքային կառավարման և են թակառուցվածքներ ի նախարարություն	Գույքահարկի մասին	Նույնականացված անձի անշարժ և շարժական գույքի հարկ վճարելու մասին տվյալը, գույքահարկերի չա փը	առցանց հարցման համաձայն
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	1) Հղիության մասին 2) Ժամանակավոր անաշխատունակության մասին	1) նույնականացված անձի հղիության և ծննդաբերության ա նաշխատունակության թերթիկ տալու հանգամանքը, հղիության փաստը՝ սկսած 30 շաբաթականից, հսկողության վերցնելու ամսաթիվ 2) Ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող անձի մասին տվյալները՝	առցանց հարցման համաձայն
4.	ՀՀ արդարադատության նախարարություն	1) մահացածի, ծնվածի, նորածնի ծնողների տվյալները	Նույնականացված անձի մասին Հայաստանի Հանրապետության	առցանց հարցման համաձայն

	1) քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն	2) ամուսնացածների եւ ամուսնալուծվածների տվյալները	կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 723-Ն որոշման համաձայն՝ 1) ամուսնության եւ ամուսնալուծության մասին տվյալը, վկայականների սերիան և համարները 2) անձի մահվան օր/ամիս/տարի	
	2) քրեակատարողական ծառայություն	Քրեակատարողական հիմնարկում գտնվելու մասին տվյալները	Նույնականացված անձի՝ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրելու կամ կալանավորված լինելու տվյալը, սկիզբը/նախատեսվող ավարտը	առցանց հարցման համաձայն
	3) իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն	ՍՊԸ ՓԲԸ ԲԲԸ ԼՏՀ ԼՊՀ վստահության վրա հիմնված ընկերություն	Նույնականացված անձի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը, կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, աշխատողների քանակը	առցանց հարցման համաձայն
	4) պրոբացիայի ծառայություն	պրոբացիայի ծառայությունում պատիժը կրող անձանց մասին տվյալներ	նուևականացված անձի պրոբացիայի ծառայությունում պատիժը կրելու տվյալը, սկիզբը/նախատեսվող ավարտը	առցանց հարցման համաձայն
5.	ՀՀ պաշտպանության նախարարություն	1) ռազմաուսումնական հաստատություններո	1) նույնականացված անձի	1) յուրաքանչյուր ամ

		ում զորանոցային պայմաններում սովորելու մասին տվյալը, 2) պաշտպանության նախարարության և ենթակա մարմիններում աշխատող եւ ընտանիքի անապահովության համակարգում հաշվառվելու դիմում ներկայացրած անձանց աշխատավարձի չափը 3) զինվորական ծառայության մեջ գտնվելու մասին տվյալը	ուսումնառության մասին տվյալը ռազմաուսումնական հաստատությունում, հաստատության անվանումը, ուսման մեկնարկի և ավարտի ամսաթվերը 2) ՊՆ համակարգում աշխատող եւ ընտանիքի անապահովության համակարգում հաշվառվելու դիմում ներկայացրած անձանց աշխատավարձի չափը 3) պարտադիր կամ այլընտրանքային զինվորական ծառայության մեջ գտնվող անձի ծառայության կարգավիճակի, մեկնարկի և ավարտի մասին տվյալը	2) յուրաքանչյուր ամ 3) առցանց հարցման համաձայն
6.	ՀՀ քնչական կոմիտե	ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած, գերեվարված զինծառայողների եւ քաղաքացիական անձանց մասին տվյալները	նույնականացված անձի անհետ կորած կամ գերեվարված անձ ճանաչվելու տվյալը	յուրաքանչյուր ամ
7.	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	1) ՀՀ-ի սահմանը վերջին 12 ամսվա ընթացքում հատելու մասին 2) Ազգային անվտագության համակարգում աշխատող անձանց տվյալների մասին	1) նույնականացված անձի ՀՀ մուտքի և ելքի օր/ամիս/տարի, ՀՀ-ից բացակայելու տեւողությունը 2) Ազգային անվտագության համակարգում	1) առցանց հարցման համաձայն 2) յուրաքանչյուր ամիս

			աշխատող և ընտանիքի անապահովության համակարգում հաշվառվելու դիմում ներկայացրած անձանց աշխատավարձի չափը	
8.	ՀՀ կադաստրի կոմիտե	1) Սեփականատիրոջ եւ համասեփականատերերի մասին տվյալներ 2) գյուղատնտեսական նշանակության հողամասերի տվյալներ 3) գործարների, գույքը վարձակալության տալու եւ վերցնելու մասին տվյալներ	նույնականացված անձի սեփականության կամ համասեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրը, մակերեսը, գործառնական նշանակությունը, կադաստրային արժեքները, գյուղատնտեսական հողամասերի կադաստրային զուտ եկամուտի չափը, գործարքի տեսակը, պայմանագրի գինը, գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման օր/ամիս/տարի, գույքը վարձակալության տալու դիմաց կամ վերցնելու համար վարձավճարի չափը, գործարքի օր/ամիս/տարի	առցանց հարցման համաձայն
9.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Զբաղվածության, մաքսային վճարների, եկամտի մասին տվյալներ	1) նույնականացված անձի պայմանագրի տեսակը, սկիզբը/ավարտը, աշխատանքի վարձատրությանն	առցանց հարցման համաձայն

			ուղղված միջոցի չափը, պարբերաբար տրամադրվող պարգեւատրման եւ պարբերական այլ վճարների չափը, խնամքի արձակուրդում գտնվելու մասին, սկիզբ/ ավարտ 2) նույնականացված անձի արժեթղթերի, ունեցվածքի, արժեքավոր իրերի վաճառքից կամ գրավադրումից, դրամական միջոցների տոկոսա դրույքներից, շահաբաժիններից, արժեթղթերից, այլ ակտիվներից ստացված եկամտի չափը, օր/ամիս/տարի 3) նույնականացված անձի կողմից իրականացված ներմուծման և արտահանման մաքսային վճարների չափը, պետական տուրքի վճարի չափը	
10.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	կրթության տեսակի, աշակերտ, ուսանող լինելու մասին տվյալը	նույնականացված անձի կրթական համակարգում ներառված լինելու մասին տվյալը՝ ըստ ուսումնական հաստատության	առցանց հարցման համաձայն, էլեկտրոնային եղանակով՝ CSV ձեւաչափով

11.	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (համաձայնությամբ)	էլեկտրաէներգիայի անհատ բաժանորդներ	բաժանորդի տվյալները, հասցեն, բաժանորդի քարտի համարը, էլեկտրաէներգիայի սպառման ամսական չափը	տարեկան մեկ անգամ, տվյալ տարվա (6-րդ, 7-ր և 8-րդ ամիսների) ծախսը
12.	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (համաձայնությամբ)	բնական գազի բնակիչ բաժանորդներ	բաժանորդի տվյալները, հասցեն, բաժանորդի քարտի համարը, բնական գազի սպառման ամսական չափը	առցանց հարցման համաձայն, դիմելի պահին նախորդո 12 ամիսների ծախսը

13.	«Վեոլիա ջուր» ՓԲԸ (համաձայնությամբ)	խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բնակիչ բաժանորդներ	բաժանորդի տվյալները, հասցեն, բաժանորդի քարտի համարը, ջրի սպառման ամսական չափը	առցանց հարցման համաձայն, դիմելո պահին նախորդող 12 ամիսների ծախսը
14.	ՀՀ կենտրոնական բանկ	ավանդների մասին	նույնականացված անձի ներդրած ավանդ ունենալու մասին	առցանց հարցման համաձայն
15.	ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ (համա	վարկային պարտավորության	1) Ֆիզիկական անձ հանդիսացող,	առցանց հարցման համաձայն

	ձայնությամբ)	մասին, տեղական եւ միջազգային փոխանցումների, փոխառությունների, խնայողությունների վերաբերյալ տվյալներ	ՀԾՀ-ով նույնականացված անձի վարկային պարտավորություն ունենալու հանգամանքը, չափը, 2) Վարկային պարտավորությունների մարման նպատակով ամսական կտրվածքով կատարվող վճարումները	
16.	Զինծառայողների պահովագրության հիմնադրամ (համաձայնությամբ)	անուշնականացված անձին տրմադրվող հատուցման մասին տվյալ	նույնականացված անձին տրամադրվող հատուցման ամսական չափը	առցանց հարցման համաձայն

Ըստ անհրաժեշտության՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունների, այլ պետական մարմինների, կազմակերպությունների

և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև տվյալները փոխանակվում են համատեղ համաձայնեցված ձևաչափերով։»։